

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Երկրորդական բաժին 11-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Հայ գրականության դասանիթերու բովանդակության պատկեր

Դասագիրք՝ «Արդի Հայ Գրականութիւն Գեղապաշտ Շրջան»

Հեղինակ՝ Մուշեղ Իշխան

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

<u>Բովանդակութիւն</u>	<u>Դասաւանդման նպատակակէտեր</u>
<p>ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՊԱՇՏ ՇՐՋԱՆ</p> <p>ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p> <p>1.- Քաղաքական վիճակ</p>	<p>-Բաժնէլ երկու հատուածներու</p> <p>1. 1900-էն 1908-ի շրջան</p> <p>-Մատնանշել որ համիտեան բռնակալութիւն կը տիրէ արեւմտահայութեան կեանքին վրայ:</p> <p>.Մտաւորականութիւնը կը գտնուի արտասահման:</p> <p>.Թրքական իշխանութեան ծանր գրաքննութիւն:</p> <p>2.- 1908-ի Ժէօն թուրքերու յեղափոխութիւնը: 1908 Օսմանեան Սահմանադրութեան հռչակում:</p> <p>-Տարագիր գրողներ կը վերադառնան:</p> <p>-Նոր թերթեր լոյս կը տեսնեն:</p>

<p>2.- Ընկերային Եւ Մշակութային Պայմաններ</p> <p>Գեղապաշտ Սերունդի Գրական Նկարագիրը</p> <p>-Լեզուի Պաշտամունք</p> <p>-Ազգային Նկարագիր</p> <p>ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</p> <p>«Անառակը»</p> <p>Եղիշէ Արք. Դուրեան</p> <p>ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ</p>	<p>-Նկատել որ Պոլսոյ եւ գաւառներու մէջ ազգային եւ գաղափարական խանդավառ մթնոլորտը նպաստեց վերելքին:</p> <p>-Նկատել գոյներու եւ ձայներու ներդաշնակ համանուագը:</p> <p>-Բացատրել որ գրողները իրենց ներշնչումը կը քաղեն ազգային ակունքներէ: Անոնք կ'արտայայտեն վերականգնումը հայ կամքին եւ վերածաղկումը հայ հոգիին:</p> <p>-Վերլուծել բանաստեղծութիւնը</p> <p>.Նիւթը՝ եկեղեցական է, քաղուած Աստուածաշունչէն:</p> <p>.Ունի բարոյախօսական բնոյթ:</p> <p>-Եզրակացնելու համար, պէտք է փոխանցել թելադրուած պատգամը՝ իշխել կիրքերու վրայ եւ ծնողքի օրհնութիւնը անհրաժեշտ է:</p> <p>-Գիտնալ Միսաք մեծարենցի գրական յատկանիշերը:</p> <p>.Ինքնատիպ գրող է:</p> <p>.Ուշագրաւ է հեղինակին բնութենապաշտ հոգին:</p> <p>.Մեծարենց բնութեան գեղեցկութիւններուն ընդմէջէն կը հաղորդուի ամբողջ տիեզերքին հետ:</p>
---	---

<p>«Միրերգ»</p>	<p>-Վերլուծել բանաստեղծությունը:</p> <p>Համայնական սիրոյ երգ մըն · սէրը որ ամէն կողմէ կ'ողջունէ զինք հոգեկան վերացում տալով: Սակայն հակադրութիւն մը իսկոյն: Բանաստեղծը հիւանդ է, հոգւոյն լոյսը հատնելու վրայ է:</p>
<p>ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ</p>	<p>-Գիտնալ որ գաւառի գրականութեան ամենէն փայլուն եւ արուեստագէտ խառնուածքի տէր դէմքն է Զարդարեան:</p> <p>-Արեւմտահայ աշխարհաբարի վարպետներէն մէկն է նոյն ատեն, որ լեզուի ու ոճի ինսամքը հասցուցած է նրբութեան:</p> <p>-Հեքիաթագիրը՝ մեծագոյն տիտղոսն է Ռուբէն Զարդարեանի:</p> <p>-Հեքիաթով Զարդարեան ստեղծեց արուեստի իրայատուկ ձեւ մը:</p>
<p>ՄԻԱՄԱՆԹՕ</p>	<p>-Գիտնալ Միամանթոյի գրական յատկանիշերը</p> <p>.Միամանթը իր բանաստեղծութիւններով նոր աշխարհ մը բացաւ մեր գրականութեան մէջ:</p> <p>.Նոր էր եւ ինքնայատուկ իր բանաստեղծութեան ձեւը, նոր էր մտածողութիւնը եւ նոր էին ստեղծած պատկերները՝ իրենց դիւցազնական զօրութեամբ:</p>
<p>«Ափ մը մոխիր՝ հայրենի տուն...»</p> <p>Միամանթօ</p>	<p>Վերլուծել բանաստեղծությունը</p> <p>–Մատնանշել որ այս բանաստեղծությունը գրուած է Միամանթոյի ծննդավայր՝ Ակնի քանդումի առիթով:</p>

	<p>-Բացատրել որ համիտեան ջարդի (1896)-ի արինոտ տարին,Սիամանթօ կը հեռանայ Պոլիսէն, կ'անցնի Եգիպտոս: Հոգին խորապէս ցնցուած էր հօրենական օճախին քանդուիլը եւ իր հարազատներուն ջարդուիլը լսելով:</p>
<p>«Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» Սիամանթօ</p>	<p>-Անդրադառնալ հետեւեալ կէտերուն· .Հայրենիքի սիրոյն, գիտակից մահուան մասին է: .Շեշտը կը դրուի ինքնապաշտպանութեան: .Յոյսով պարուրուած է բանաստեղծութիւնը: .Քերթուածը կ'անդրադառնայ երկու տեսակ պայքարի մասին. մէկը՝ գրելով, միւսը՝ ինքնապաշտպանութեան դիմելով:</p>
<p>«Պարը» «Խեղդամահը» Սիամանթօ</p>	<p>-Նկարագրուած է սարսափազդու տեսարաններ կոտորածէն: -Նշել որ մոայլ պատկերներու կողքին Սիամանթօ գծած է նաեւ պայծառ գալիքին յոյսը:</p>
<p>ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ</p>	<p>-Շեշտել որ Զապէլ Եսայեան հոգեբանական վէպի մեծագոյն վարպետն է: -Գիտնալ որ Եսայեան իր գրիչով եւ կեանքով աշխատած է հայ կինը մղել ընկերային ասպարէզ, իբրեւ գործօն դերակատար այր մարդու կողքին եւ անոր հետ հաւասար իրաւունքներով:</p>

<p>«Մարդկային հոգին»</p> <p>Զապել Եսայեան</p> <p>ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ</p> <p>«Կարմիր հողը»</p> <p>Դանիել Վարուժան</p>	<p>Վերլուծել հատուածը</p> <p>-Նշել որ այս հատուածը ինքնաճանաչումի եւ ինքնարժեւորումի հրաւեր մըն :</p> <p>-Հրաւիրել իւրաքանչիւր անհատ թափանցելու իր հոգիին անսահմանութեանը:</p> <p>-Թուել Դանիել Վարուժանի գրական յատկանիշերը:</p> <p>.Ան թէ՛ ազգային ապրումներու եւ թէ՛ համամարդկային ապրումներու երգիչն է:</p> <p>.Լեզուն շատ հարուստ է:</p> <p>.Տէր է հզօր երեւակայութեան:</p> <p>Վերլուծել քերթուածը</p> <p>.Ազգ մը ամբողջ հողէ մարմին առած բանաստեղծին հետ կը խօսի, գաղափարները հոգիի կը վերածէ:</p> <p>.Այդ հողը որ հայ ժողովուրդի արեան հետ թաթախուած է բանաստեղծը կը մղէ լալու ու մրմնջելու:Տարբեր բացատրութեամբ՝ ըմբոստացումի կը մղէ:</p>
--	---

<p>«Բանուորուհին»</p> <p>Դանիել Վարուժան</p>	<p>-Գիտնալ որ Դանիել Վարուժան Պելճիքայի Կան քաղաքի մէջ կը հաղորդուի ազգային եւ համամարդկային բազմակողմանի ապրումներով: Ահաւասիկ այս ապրումներն են ահա, որ արձագանգ կը գտնեն այս բանաստեղծութեան մէջ յատկապէ՛ս եւ «Հեթանոս երգեր» բանաստեղծութեան մէջ ընդհանրապէս:</p>
<p>«Ցան»</p> <p>Դանիել Վարուժան</p>	<p>-Ընդգծել որ համամարդկային նիւթ մը կ'ընդգրկէ այս բանաստեղծութիւնը, քաղուած՝ «Հացին երգը» գիրքէն:</p>
<p>ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ</p>	<p>-Թուել Վահան Թէքէեանի գրական յատկանիշերը .Վահան Թէքէեան կը ներկայանայ իր ուրոյն նկարագիրով, առանձին դպրոց մը ստեղծելու չափ շեշտուած:</p> <p>.Ան հայ գրականութեան բերաւ Ֆրանսական խորհրդապաշտ բանաստեղծներու յատկանիշերը՝ իր տաղանդին եւ հայեցի ոգիին դրոշմով:</p> <p>Առաւելաբար մշակած է հնչեակը, որուն մեծագոյն վարպետը կը համարուի մեր մէջ:</p>
<p>«Եկեղեցին հայկական»</p> <p>Վահան Թէքէեան</p>	<p>Վերլուծել քերթուածը</p> <p>-Հայ եկեղեցւոյ՝ Ազգային եկեղեցի ըլլալու իրողութիւնը կը դրուատէ:</p>

<p>«Բարձրացում»</p> <p>Վահան Թեքեան</p> <p>ԼԵՒՈՆ ՇԱՆԹ</p>	<p>-Վերլուծել բանաստեղծության փոխանցած պատգամը որ կը վերաբերի հոգեկան եւ մտային կարողություններու գերազանցումի մասին:</p> <p>-Գիտնալ որ Լեւոն Շանթի մէջ կայ բանաստեղծը, վիպագիրը եւ թատերագիրը:</p> <p>.Լեւոն Շանթ թատերագիրն է որ հասած է բացառիկ նուաճումներու:</p>
<p>«Եթէ»</p> <p>Թարգմ. Լեւոն Շանթի</p>	<p>-Գիտնալ որ Լեւոն Շանթի համար մարդ ըմբռնումին իսկական տիպարը խոշոր չափով մը խտացած կը գտնենք անգլիացի բանաստեղծ Քիփլինկի այս քերթուածին մէջ:</p>
<p>«Հին Աստուածներ»</p> <p>Լեւոն Շանթ (հատուած)</p>	<p>-Բացատրել որ «Հին Աստուածներ»ը ընդհանուր գիծերով կը ներկայացնէ հոգիի եւ մարմնի, զգացումներու եւ բանականութեան, կիրքերու եւ կամքի յաւիտենական պայքարը:</p>
<p>ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ</p>	<p>-Մատնանշել որ Յակոբ Օշական մեր գրականութեան մէջ երեւոյթ մը կը հանդիսանայ իր գործին պատկառելի քանակով: Ան փորձած է գրական բոլոր սեռերը:</p> <p>-Թուենք՝ Յակոբ Օշական</p> <p>.Քննադատը</p> <p>«Համապատկեր Արեւմտահայ գրականութեան» 10 հատոր:</p>

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

«Հին օրհնություն»

-«Քառեակներ» (ընտրովի)

-«Ծովակլին հարսը» (հեքիաթ)

Յովհաննէս Թումանեան

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

.Վիպագիր

Օշականի գրականության ամենէն արժեքատու ու մնայուն մասը կը կազմեն իր վեպերը:

-Բաղդատել մեր գրականության մէջ Թումանեանի դերը Կոմիտասի հետ: Ինչպէս որ հայ երգին հանճարեղ հայրը ժողովրդական երգեր հաւաքեց եւ մշակեց, նոյնը ըրաւ նաեւ Թումանեան, տոհմիկ ասանդութիւններ մշակելով՝ հայեցի հարազատութեամբ:

-Ունի քնարերգական եւ հայրենասիրական բանաստեղծութիւններ:

-Ծանօթանալ Թումանեանի քառեակներուն, ուր բանաստեղծը կ'արտայայտէ բարիի ու չարի գաղափարը:

-Թումանեան նոյն ատեն մանկական գրականության մեծագոյն վարպետն է իր հեքիաթներով, պատմուածքներով եւ առակներով:

-Կարդալ եւ վերլուծել

-Գիտնալ որ Վահան Տերեան գերազանցապէս քնարերգակ բանաստեղծ է: Իր վեշտը ներշնչումի գրեթէ միակ աղբիւրն է: Ամենէն աւելի Տերեանն է, որ յաջողած է իր քերթուածներու տողերուն տալ երգի մը քաղցրութիւնը եւ երաժշտական

<p>-«Տխրություն»</p> <p>-«Աշնան մեղեդի»</p> <p>-«Հրաժեշտի գազել»</p> <p>ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ</p> <p>-«Ես իմ անուշ Հայաստանի»</p> <p>-«Ամբոխները իսելագարուած»</p> <p style="text-align: right;">Չարենց</p>	<p>ներդաշնակութիւնը:</p> <p>-Տէրեան գործածած է այնպիսի յղկուած, նուրբ եւ յստակ լեզու, որ բնաւ նման չէ մինչ այդ եղած արեւելահայ բանաստեղծներու լեզուին:</p> <p>-Կարդալ եւ վերլուծել</p> <p>-Թուել Չարենցի գրական յատկանիշերը.</p> <p>.Չարենցի արուեստը կը յատկանշուի յանդուգն եւ հրավառ պատկերներու հարստութեամբ, թռչող երեւակայութեամբ եւ խօսքին վարակիչ ջերմութեամբ:</p> <p>-Կարդալ եւ վերլուծել:</p>
--	---